ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՍԱՐՅԱՆ 22, ՀԵՌ.(374-15) 52-85-11

« 14 » մայիսի 2025 թ.

№ ԱՍ/34.2-Մ2-9/2152-2025

«ՀՈՎՍԵՓՅԱՆ 90 ՇԻՆ» ՍՊԸ-ի
տնօրեն Ա. Հովսեփյանին

Հարգելի պարոն Հովսեփյան,

Ձեզ է ուղարկվում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2025 թվականի մայիսի 14-ի «ՀՈՎՍԵՓՅԱՆ 90 ՇԻՆ» ՍՊԸ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից առանց թույլտվության ռադիոհաճախականության օգտագործումը դադարեցնելու մասին» №183-Ա որոշման պատճենը:

Միաժամանակ հայտնում եմ, որ նշված որոշման պահանջները չկատարելու և առանց թույլտվության ռադիոհաճախականության օգտագործումը շարունակելու դեպքում, «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդվածի համաձայն, հանձնաժողովն իրավասու է կիրառել համապատասխան տույժ կամ տուգանք՝ մեկ միլիոն դրամից երկու միլիոն դրամի չափով:

Առդիր՝ 2 էջ:

14.05.2025

X

ԱՐԹՈՒՐ ՍԱՖԱՐՅԱՆ

Ա. Սաֆարյան

Կատարող՝ Սիրանուշ Ղարախանյան ☎ 015 58 08 08 (124)

600.0183.14.05.25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մայիսի 2025 թվականի №183-Ա

«ՀՈՎՍԵՓՅԱՆ 90 ՇԻՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2025 թվականի փետրվարի 20-ի №04/11.1/1400-2025 գրությամբ ներկայացված տեղեկատվությունն առ այն, որ էլեկտրամագնիսական իրավիճակների հետազոտումների արդյունքում Կոտայքի մարզի Զովունի համայնքի 30-րդ փողոցի 2-րդ նրբանցք հասցեում գտնվող շինհրապարակում, որտեղ գործունեություն է իրականացնում «ՀՈՎՍԵՓՅԱՆ 90 ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն), հայտնաբերվել են առանց թույլտվության 462,075ՄՀց ռադիոհաճախականությամբ շահագործվող ռադիոկայաններ,

բ) առանց թույլտվության ռադիոհաճախականության օգտագործումը դադարեցնելու վերաբերյալ Ընկերությանն ուղղված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2025 թվականի մարտի 20-ի №ՍԾ/34.2-Մ2-9/1194-2025 գրությունը, որին ի պատասխան՝ Ընկերությունը հայտնել է, որ ռադիոկայանների օգտագործումը վերջինիս կողմից դադարեցվել է,

գ) որ իրավասու պետական մարմնի ներկայացրած տեղեկատվությամբ և Ընկերության գրությամբ փաստվել է վերջինիս կողմից առանց թույլտվության 462,075ՄՀց ռադիոհաճախականության օգտագործումը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետի «ե» ենթակետը, 60-րդ հոդվածը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի

2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից դադարեցնել առանց թույլտվության 462,075ՄՀց ռադիոհաճախականության օգտագործումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵԼՈՊՅԱՆ**

ք. Երևան
14 մայիսի 2025 թ.

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՍԱՐՅԱՆ Փ. 22
0002
ԱՍ/34.2-Մ2-9/2152-2025պ/տ

ՎՃԱՐՎԱԾ Է / Tax perçue / ՀԱՅ ՓՈՍՏ / HAY POST
ԵՐԵՎԱՆ 0002 15 MAY 2025

L0127895514AM

ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁ RETURN	CN15
☐ Անհայտ/ Unknown ☐ Տեղափոխված/ Gone away ☐ Թերի հասցե/ Insufficient address	☐ Մերժված / Refused ☑ Չի պահանջվել/ Unclaimed ☐
Ետ վերադարձման ամսաթիվը / Return Date	

09 JUN 2025

«ՅՈՎՍԵՓՅԱՆ 90 ՇԻՆ» ՍՊԸ
Armenia ԿՈՏԱՅՔ Ֆանտան, Գինեվան, Ոպանյան փ., 36,

powered by Envelope, envelope.haypost.am

YEREVAN 0002 13 JUN 2025 HayPost ARMENIA

YEREVAN 0002 13 JUN 2025 HayPost ARMENIA